ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2014թ. թիվ 320-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԴՎԻ, ՄԵՂՎԱՀՈՎԻՏ, ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. հոկտեմբերի 1-ի «2014 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 140-Ա որոշման՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2014թ. դեկտեմբերի 14-ին նշանակել Լոռու մարզի Արդվի, Մեղվահովիտ և Վահագնի համայնքների ղեկավարների հերթական ընտրություններ:

2. Արդվի համայնքի նորընտիր ղեկավարի կողմից լիազորությունների ստանձնման ժամկետ սահմանել 25.02.2015թ.: Մեղվահովիտ և Վահագնի համայնքների նորընտիր ղեկավարների կողմից լիազորությունների ստանձնման ժամկետ սահմանել 19.01.2015թ.:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ սույն որոշման մասին ծանուցել համայնքների ներկայիս և նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. սեպտեմբերի 11
ք.Վանաձոր